

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
„31,, 07 2001 թ.
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 12001118

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ՈՐՈՇՈՒՄ

25 հունիսի 2001 թվականի N 53

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Պետական վիճակագրության մասին" ՀՀ օրենքի 10 հոդվածի երրորդ մասի և կետով և 14 հոդվածի 12-րդ մասով սահմանված դրույթներով, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը որոշում է.

հաստատել Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը:

Հաստատված է ՀՀ
վիճակագրության պետական խորհրդի
25 հունիսի 2001 թ.
թիվ 53 որոշմամբ

ԿԱՐԳ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների (հետայսու՝ վիճակագրական գաղտնիք) պահպանման, օգտագործման և հրապարակման կարգը, վիճակագրական գաղտնիքի շուրջ ծագող հարաբերությունների մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները և մշակվել է համաձայն "Պետական վիճակագրության մասին" ՀՀ օրենքի 14 հոդվածի 7-ից 12 մասերով սահմանված դրույթների:

2. Սույն կարգում գործածված հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ որ սահմանված է վիճակագրական գաղտնիքի իրավական հիմքերը կարգավորող օրենքներով:

II. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Վիճակագրական գաղտնիքի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են "Պետական վիճակագրության մասին", "Հայաստանի Հանրապետության 2001-2003 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի մասին", "Մարդահամարի մասին" ՀՀ օրենքներով, այլ օրենքներով, սույն կարգով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ նաև այլ իրավական ակտերով:

III. ԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

4. Սույն կարգի դրույթները տարածվում են պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության, նրա տարածքային ու գործառնական ստորաբաժանումների աշխատակիցների (այդ թվում՝ նախկին), ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամների (այդ թվում՝ նախկին), պետական վիճակագրություն իրականացնող

մարմնին սահմանված կարգով ծառայություններ (աշխատանքներ) մատուցած եւ մատուցող ֆիզիկական եւ իրավաբանական անձանց, սահմանված կարգով վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկություններ ստացած բոլոր անձանց եւ հիմնարկների, ինչպես նաեւ վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա:

IV. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

5. Վիճակագրական գաղտնիք են համարվում այն վիճակագրական տվյալները որոնց միջոցով հնարավոր է ուղղակի կամ անուղղակի ձեռով բացահայտել, (նույնականացնել, իդենտիֆիկացնել) վիճակագրական տեղեկություն տրամադրողին՝ ձեռք բերել անհատական (անվանական) տեղեկություններ: Տվյալները, որոնք հասանելի են հանրությանը այլ աղբյուրներից, վիճակագրական գաղտնիք չեն համարվում: Սույն կարգի իմաստով, այլ աղբյուր են համարվում օրենքով սահմանված պարտավորության համաձայն փաստացի հրապարակումները պետական պաշտոնական տեղեկագրերում եւ զանգվածային լրատվության այլ միջոցներում:

6. Վիճակագրական տեղեկություն տրամադրողի ուղղակի բացահայտում է տեղի ունենում, երբ հայտնի է դառնում նրա անունը (անվանումը), գտնվելու վայրը, դասակարգման նույնականացման ծածկագիրը: Անուղղակի բացահայտում է տեղի ունենում, երբ որեւէ միավորի անհատականությունը հնարավոր է լինում պարզել վերը նշված տվյալների բացակայության ժամանակ, բայց այլ լրացուցիչ տվյալների միջոցով, ժամանակի, ծախսերի եւ մարդկային ճիգերի գործադրման խելամիտ սահմաններում:

7. Վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալները կարող են լինել անհատական (անվանական)՝ միկրոտվյալներ կամ ամփոփված (ըստ անալիտիկ կտրվածքի ամփոփման աստիճանի) տվյալներ:

8. Միկրոտվյալներ են համարվում անհատական տվյալները, որոնք պատկանում են մեկ որոշակի վիճակագրական տեղեկություններ տրամադրողին (այսինքն հանդիսանում են վիճակագրական գաղտնիք), որը կարող է լինել ֆիզիկական անձը, տնային տնտեսությունը, իրավաբանական անձը կամ վարչատարածքային բաժանման սկզբնական միավորը:

9. Ամփոփված (աղյուսակային) տվյալները հանդիսանում են վիճակագրական (այդ թվում՝ վարչական) աշխատանքի արդյունք: Ամփոփված տվյալները սովորաբար հանդես են գալիս աղյուսակային տեսքով: Վիճակագրական գաղտնիք հանդիսացող ամփոփված (աղյուսակային) տվյալը հրապարակվելուց (բացահայտվելուց) առաջ ձեւափոխվում է, տվյալների նույնականացման հնարավորության աստիճանը մինչեւ գաղտնիքի պահպանման առումով տրամաբանորեն ընդունելի (եւ՝ ուղղակի, եւ՝ անուղղակի բացահայտումը բացառող) մակարդակի իջեցման նպատակով: Տվյալների ձեւափոխման մեթոդներն են միջազգային վիճակագրական պրակտիկայում հայտնի այնպիսի մեթոդներ, ինչպիսին են՝ տարածքային ընդհանրացման մեթոդը, նվազագույն միավորների կանոնի մեթոդը, գերակշռության կանոնի մեթոդը, մոտարկման մեթոդը, աղմուկի էֆեկտի մեթոդը, վերածածկագրման մեթոդը եւ այլն: Կոնկրետ կիրառվող մեթոդի ընտրությունը կատարվում է սույն կարգի 5-րդ գլխում նշված հանձնաժողովի կողմից: Ձեւափոխման իրականացման կոնկրետ մեթոդը բացահայտման ենթակա չէ:

V. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՅԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

10. Պետական վիճակագրություն իրականացնող մարմինն իր համակարգում նախատեսում է "Վիճակագրական գաղտնիքի վերաբերյալ հարցերի հանձնաժողով (աշխատանքային խումբ)" (հետայսու՝ Հանձնաժողով), որը պարտավոր է պարբերաբար վերանայել եւ գնահատել վիճակագրական գաղտնիքի հետ կապված իրականացվող բոլոր գործընթացներն ու ընթացակարգերը: Հանձնաժողովը ստեղծվում է ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով, նրա աշխատակարգը հաստատվում է ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից: Հանձնաժողովը միջոցներ է ձեռնարկում վիճակագրական գաղտնիքի եւ տվյալների պահպանման վերաբերյալ մեթոդների, միջոցների եւ տեխնոլոգիաների զարգացման միտումներին մշտապես հետետելու, ինչպես նաեւ վիճակագրական տեղեկություններ տրամադրողների եւ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների հետ դրանց կիրառմանը վերաբերող հարցերի քննարկման նպատակով:

VI. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԸ

11. Վիճակագրական գաղտնիքի պահպանումը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է տարբերել վիճակագրական տվյալների հետ աշխատելու հետեւյալ 4 միջավայրերը.

Առաջին միջավայրը՝ վիճակագրական սկզբնական տվյալների հավաքագրման եւ մուտքագրման, ինչպես նաեւ մուտքագրված վիճակագրական տվյալների փոխանցման միջավայրն է: Այդ փոխանցումը կարող է կատարվել նաեւ էլեկտրոնային տեսքով՝ կապի միջոցների օգնությամբ:

Երկրորդ միջավայրը՝ առաջին միջավայրից ստացված եւ մուտքագրված տվյալների պահպանման ու մշակման միջավայրն է, որտեղ կատարվում է տվյալների ամփոփում եւ դրանց նախապատրաստում գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով տրամադրելու համար: Ամփոփված եւ գիտահետազոտական աշխատանքների համար նախապատրաստված տվյալները տեղափոխվում են 3-րդ միջավայր:

Երրորդ միջավայրը՝ ամփոփված վիճակագրական տվյալների պահպանման միջավայրն է, որը հիմք է հանդիսանում վիճակագրական հրապարակումների նախապատրաստման համար: Այս միջավայրում կատարվում են նաեւ լրահաշվարկներ եւ տրվում են գնահատականներ:

Չորրորդ միջավայրը՝ վիճակագրական տվյալների տարածման միջավայրն է, հրապարակումների, ՀՀ ԱՎԾ գրադարանի եւ ինտերնետի միջոցով:

12. Վիճակագրական գաղտնիքի պահպանման յուրաքանչյուր միջավայրի համար Հանձնաժողովի կողմից, համաձայնեցնելով ՀՀ վիճակագրության պետական խորհրդի համապատասխան անդամի հետ, սահմանվում են աշխատանքի առանձին կանոններ, որոնց պարտավոր են հետեւել տվյալ միջավայրում աշխատելու իրավունք ունեցող բոլոր աշխատակիցները:

VII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

13. Պետական վիճակագրություն իրականացնող մարմինը երաշխավորում է վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների պահպանումը: Այդ նպատակով պետական վիճակագրություն իրականացնող մարմինը սահմանված կարգով ձեռնարկում է միջոցներ՝ վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների բազաներ ոչ օրինական մուտքը, այդ բնույթի տեղեկությունների ոչ օրինական տարածումը կամ օգտագործումը չթույլատրելու (բացառելու) նպատակով:

14. Վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների որպես գաղտնիք պահպանման նվազագույն ժամկետներն են.

ա/ ֆիզիկական անձանց վերաբերող տեղեկությունների դեպքում՝ տեղեկությունների ստացումից հետո 75 տարի,

բ/ իրավաբանական անձանց վերաբերող տեղեկությունների եւ այլ դեպքերում՝ տեղեկությունների ստացումից հետո 25 տարի:

15. Վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների հասանելիությունը սահմանափակվում է այն անձանցով, որոնք ծառայողական պարտականությունների իրականացման համար կատարում են պետական վիճակագրական աշխատանքներ, միայն այն մասով, որը նրանց անհրաժեշտ է այդ աշխատանքների իրականացման համար:

16. Պետական վիճակագրություն իրականացնող մարմնի ներկա եւ նախկին աշխատակիցներին, ինչպես նաեւ այն անձանց ու կազմակերպություններին, որոնք վիճակագրություն իրականացնող մարմնին ծառայություններ (աշխատանքներ) են մատուցում կամ մատուցել են նախկինում, արգելվում է ծառայության ընթացքում (աշխատանքի բերումով) իրենց վստահված կամ հայտնի դարձած վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները հրապարակելը (բացահայտելը), ինչպես նաեւ անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով դրանք օգտագործելը, երրորդ անձանց այդպիսի օգտագործման ուղղակի կամ անուղղակի հնարավորություն ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետեւանքով այն հնարավոր դարձնելը:

VIII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

17. Վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները օգտագործվում են վիճակագրական նպատակներով:

Վիճակագրական նպատակներով տվյալների օգտագործումն է համարվում դրանց օգտագործումը բացառապես օրենքով եւ սույն կարգով սահմանված ամփոփ վիճակագրական փաստագրման եւ վիճակագրական վերլուծության համար:

18. Վիճակագրական տեղեկություններ տրամադրողներն իրավունք ունեն պետական վիճակագրություն իրականացնող մարմնի տվյալների բանկից գրավոր դիմումի հիման վրա ստանալու իրենց վերաբերյալ վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալները: Իրավաբանական անձի դեպքում դիմումը տրվում է նրա գործադիր մարմնի կամ նրա կանոնադրությամբ համապատասխան լիազորություն ունեցող այլ մարմնի կողմից:

Վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող դիմումի մեջ պարտադիր նշվում են.

ա/ ֆիզիկական անձանց դեպքում, պահանջվող տվյալը (տվյալները), այդ տվյալի (տվյալների) հավաքագրման համար հիմք հանդիսացած վիճակագրական փաստաթղթի (փաստաթղթերի) անվանումը (անվանումները), ժամանակահատվածը, ապա՝ դիմումը ներկայացնողի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները եւ բնակության վայրը: Ֆիզիկական անձանց դիմումները պարտադիր վավերացվում են ստորագրությամբ:

բ/ իրավաբանական անձանց դեպքում, պահանջվող տվյալը (տվյալները), այդ տվյալի (տվյալների) հավաքագրման համար հիմք հանդիսացած վիճակագրական փաստաթղթի (փաստաթղթերի) անվանումը (անվանումները), ժամանակահատվածը, ապա՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, պետական ռեգիստրում գրանցման վկայականի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը, ինչպես նաեւ դիմումը ներկայացնողի անվան սկզբնատառը, ազգանունը եւ պաշտոնը: Իրավաբանական անձանց դիմումները պարտադիր վավերացվում են ստորագրությամբ եւ կնիքով:

Վիճակագրական տեղեկություն տրամադրողի կողմից ներկայացված դիմումում սույն կետի երկրորդ պարբերությունում նշված որեւէ վավերապայմանի բացակայության, անճշտության կամ պետական վիճակագրություն իրականացնող մարմնի տվյալների բանկում պահանջվող տեղեկատվության բացակայության եւ (կամ) այդպիսի հաշվառում չվարելու դեպքերում վիճակագրական տվյալների տրամադրումը մերժվում է:

(18-րդ կետը փոփ. 18.10.02 թիվ 245-Ն որոշում)

19. Վիճակագրական գաղտնիքի հրապարակում (բացահայտում) է համարվում վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձեով զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ կերպ տարածելը, երրորդ անձին կամ անձանց այն հայտնի դարձնելը, երրորդ անձանց նման տեղեկություններ հայթայթելու ուղղակի կամ անուղղակի հնարավորություն ընձեռելը, այն է՝ թույլատրելը, չխոչընդոտելը կամ նման տեղեկությունների պահպանման կարգի խախտման հետեւանքով այն հնարավոր դարձնելը:

20. Վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալները հրապարակման կամ այլ ձեով տարածման ենթակա չեն: Դրանք կարող են հրապարակվել կամ տարածվել միայն.

ա) դրանք ներկայացնողի գրավոր համաձայնության դեպքում: Իրավաբանական անձի դեպքում համաձայնությունը տրվում է նրա գործադիր մարմնի կամ նրա կանոնադրությամբ համապատասխան լիազորություն ունեցող այլ մարմնի կողմից: Համաձայնությունը կարող է պարունակել տվյալների օգտագործման վերաբերյալ սահմանափակումներ.

բ) երբ դրանք հանդիսանում են բնական կամ այլ մենաշնորհային գործունեությունն արտացոլող տեղեկություններ, որոնց չհրապարակումն (չտարածումն) էապես կազդի վիճակագրական տեղեկատվության ամբողջականության սկզբունքների պահպանման վրա: Նման դեպքերում հրապարակման (տարածման) մասին որոշումը կայացնում է ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը.

գ) երբ հավաքագրված տեղեկություններ տրամադրվում են պետական վիճակագրություն իրականացնող մարմնի աշխատակցին եւ (կամ) այդ մարմնին ծառայություններ մատուցող անձանց, եթե

- դրանք անհրաժեշտ են վիճակագրական աշխատանքներ կատարելու համար,

- եթե այդ անձանց "ֆունկցիոնալ պարտականություններով" (կամ սահմանված կարգով ծառայություններ մատուցելու վերաբերյալ քաղաքացիա-իրավական պայմանագրի մեջ) ներառված են դրույթներ այն մասին, որ անձինք ձեռնպահ են մնալու աշխատանքի կապակցությամբ իրենց վստահված (տրամադրված) կամ հայտնի դարձած վիճակագրական գաղտնիք կազմող տեղեկության հրապարակումից (բացահայտումից), ինչպես նաեւ իրենց անձնական կամ երրորդ անձանց շահերից ելնելով, դրանք օգտագործելուց կամ հրապարակելուց (բացահայտելուց).

դ) բացառիկ դեպքում՝ անհատական (անվանական) տվյալների ուղղակի բացահայտման հնարավորություն չտվող ձեռով եւ մասով՝ գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի որոշմամբ:

Գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակների համար գրավոր դիմումի համաձայն վերը նշված կարգով կարող են տրամադրվել անհատական (միկրոտվյալներ) եւ ամփոփ (աղյուսակային) տվյալներ:

ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալների տրամադրման մասին որոշում կարող է ընդունել, եթե գիտահետազոտական աշխատանքի սպասվելիք արդյունքները չեն վերաբերում բացահայտման ենթարկվող անհատական (վիճակագրական) միավորներին եւ եթե գիտահետազոտական աշխատանքի շրջանակում երաշխավորվում է վիճակագրական գաղտնիքի պահպանումը (այսինքն չհրապարակմամբ եւ չտրամադրմամբ): Այն պետք է հավաստված լինի գիտակրթական (գիտահետազոտական) կազմակերպության կողմից վավերացված փաստաթղթով: Այն պետք է ենթադրի նաեւ գիտահետազոտական աշխատանքների իրականացման նպատակների համար վիճակագրական գաղտնիք պարունակող տեղեկությունների հասանելիության սահմանափակում այն անձանցով, որոնց դրանք անհրաժեշտ են սահմանված աշխատանքների իրականացման համար: ՀՀ վիճակագրության պետական խորհուրդը պետք է համոզված լինի, որ նշված ձեռով տվյալների տրամադրումը չի վնասելու կոնկրետ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողներին՝ ինչն անհրաժեշտ գրավական է պետական վիճակագրություն իրականացնող մարմնի նկատմամբ վստահության եւ արժանահավատ վիճակագրություն ունենալու համար:

IX. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

21. Վիճակագրական գաղտնիք պարունակող տվյալների օգտագործման, պահպանման, հրապարակման կանոնները խախտելն առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: